Արձանագրության 5

Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/14» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

13.02.2019թ.
Ժամը՝ 11:45

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Գևորգյան /գնահատող/, Լ. Գևորգյան /գնահատող/, Ե. Մատասյան /բացող/, Բ. Տեր-Թովմասյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման մասին

(Է. Շաքարյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է պատասխան, համաձայն որի մասնակցի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների մասին եզրակացությունը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Բաց մրցույթ ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել բաց մրցույթ գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. « ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/14» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Է. Շաքարյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-19/14» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Է. Շաքարյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- **Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի պատշգամբների վերանորոգման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման** պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տասը օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Է. Շաքարյան

Անդամներ՝ ..... Ս. Գևորգյան

..... Ե. Մատասյան

..... Լ. Գևորգյան

..... Բ. Տեր-Թովմասյան

Քարտուղար՝ ..... Ն. Կիրակոսյան